ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/129

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2025 թ. N 129

## «ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին**

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան, Բագրատունյաց 37**

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մայիսի 07-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

**Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.**

դիմում-հայտի ներկայացում՝ 02 փետրվարի 2024թ.

վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 26 հուլիսի 2024թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 25-27 նոյեմբերի 2024թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 17 մարտի 2025թ.

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 07 հունվարի 2025թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Հերմինե Գրիգորյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Լիլիթ Աբելյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ:
- **Օլգա Ավետիսյան՝** Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի մասնագիտական առարկաների ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
- **Մերի Հովսեփյան՝** Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանողուհի, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

| Չափանիշ | Եզրակացություն |
|---|---|
| 1. Առաքելություն և նպատակներ | Բավարարում է |
| 2. Կառավարում ու վարչարարություն | Բավարարում է |
| 3. Մասնագիտության կրթական ծրագրեր | Բավարարում է |
| 4. Ուսանողներ | Բավարարում է |
| 5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ | Բավարարում է |
| 6. Հետազոտություն և զարգացում | Բավարարում է |
| 7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ | Բավարարում է |
| 8. Հասարակական պատասխանատվություն | Բավարարում է |
| 9. Արտաքին կապեր և միջազգայնացում | Բավարարում է |
| 10. Որակի ներքին ապահովման համակարգ | Չի բավարարում |

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. *Քոլեջն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում*

Քոլեջում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը: Դասախոսական կազմը ներառում է մշակույթի և արվեստի ոլորտում ճանաչում ունեցող փորձառու մասնագետներ: Ուսումնական գործընթացում առկա է ստեղծագործական և

մասնագիտական աճին նպաստող միջավայր, իսկ որոշ ծրագրերում օգտագործվում են նաև գործատուների և գործընկեր հաստատությունների ռեսուրսները: Ուսանողները ստանում են հետադարձ կապ՝ շարունակական առաջընթացի ապահովման նպատակով: Քոլեջին խորհուրդ է տրվում մշակել և ներդնել կրթական ծրագրերի գնահատման, մշտադիտարկման և բարելավման հստակեցված ընթացակարգեր՝ հիմնված ուսանողների վերջնարդյունքների, շահակիցների արձագանքների և աշխատաշուկայի պահանջների վրա: Միջազգային փորձի համեմատության համար նպատակահարմար է մշակել կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման կարգ և խթանել դասախոսների և ուսանողների ներգրավումը շարժունության ծրագրերում՝ նորարարական հմտությունների զարգացման համար:

II. ***Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը***

Քոլեջում ձևավորվել է ռազմավարական ծրագրի վրա հիմնված կառավարման համակարգ, որը հնարավորություն է տալիս որոշումներ կայացնել շահակիցների մասնակցությամբ և ներքին կառավարման մակարդակներում ապահովել համագործակցություն: Որակի ապահովման համակարգը դիտարկվում է որպես կարևոր բաղադրիչ:
Խորհուրդ է տրվում ամրապնդել գնահատման առանցքային ցուցիչների վրա հիմնված պլանավորումը՝ սահմանելով հստակ չափելի նպատակներ և դրանց հասնելու ընթացքի պարբերական վերլուծության մեխանիզմներ: Նպատակահարմար է զարգացնել տվյալների հավաքագրման և մշտադիտարկման համակարգեր, որոնք կապահովեն տեղեկատվության շարունակական հասանելիություն և թույլ կտան հիմնավորված արձագանք տալ հաստատության զարգացման միտումներին: Կառավարման համակարգի հաշվետվողականության մակարդակը պետք է բարձրացվել՝ շահակիցներին ավելի տեսանելի կերպով ներկայացնելով ռազմավարական առաջընթացն ու կատարված գործողությունները: Տնօրենի տարեկան հաշվետվությունները պետք է փաստաթղթավորվեն և հրապարակվեն: Որակի ապահովման համակարգի ամրապնդման համար անհրաժեշտ է հստակեցնել գործառույթներն ու ներդնել մշտադիտարկման և բարելավման գործընթացների միավորող շրջանակ՝ այն ինտեգրելով կառավարման համակարգին: Կայուն զարգացման տեսանկյունից կարևոր է նաև մշակել ֆինանսական աղբյուրների բազմազանեցման ռազմավարություն՝ նվազեցնելու ֆինանսական կախվածությունը մեկ կամ երկու հիմնական աղբյուրից:

III. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը***

Քոլեջում ձևավորվում է ստեղծագործական և հետազոտական աշխատանքների մշակույթ, որը միտված է դասախոսների և ուսանողների ստեղծագործական ու վերլուծական կարողությունների բացահայտմանը և խրախուսմանը: Միջազգայնացման և արտաքին կապերի ուղղությամբ առկա են դրական նախադրյալներ, սակայն դրանց ընդլայնման և կայունացման անհրաժեշտություն կա: Հատկապես կարևոր է համագործակցությունը համանման հաստատությունների հետ, փորձի փոխանակումը և բենչմարքինգի իրականացումը, ինչը կարևոր է ուսումնառության որակի բարելավման համար:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտը մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ Վ. Գաբրիելյան

2025 թ., մայիսի 07